«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԲԸ

«РОСГОССТРАХ-АРМЕНИЯ»
СТРАХОВОЕ ЗАО

"ROSGOSSTRAKH-ARMENIA"
INSURANCE CJSC

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան «26» հունվարի 2010թ.

Սույնով տեղեկացնում ենք, որ «Լոնդոն-Երևան Կo» ապահովագրական ՍՊԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի միջև 28 դեկտեմբերի 2009թ. կնքված ապահովագրական պորտֆելի փոխանցման պայմանագրի համաձայն, ՀՀ Կենտրոնական բանկը տվել է իր նախնական թույլտվությունը՝ «Լոնդոն-Երևան Կo» ապահովագրական ՍՊԸ-ի ապահովագրական պորտֆելը «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ին փոխանցելու վերաբերյալ:

Ելնելով վերոհիշյալից և ղեկավարվելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 127-րդ հոդվածով, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն, որպես ստանձնող ընկերություն, տեղեկացնում է «Լոնդոն- Երևան Կo» ապահովագրական ՍՊԸ-ի ապահովադիրներին /հետագայում՝ Ապահովադիրներ/, որ այսուհետ նրանց և «Լոնդոն-Երևան Կo» ապահովագրական ՍՊԸ-ի միջև կնքված ապահովագրության պայմանագրերով/վկայագրերով Ապահովագրող է հանդիսանալու «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն՝ Ապահովագրողի բոլոր իրավունքներով, և կրելու է Ապահովագրողի համար ՀՀ օրենսդրությամբ և պայմանագրով/վկայագրով նախատեսված բոլոր պարտավորությունները:

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ն ողջունում է «Լոնդոն-Երևան» ԱՓԲԸ-ի բոլոր ապահովադիրներին և ուրախ կլինի համագործակցել վերջիններիս հետ:

Միաժամանակ, ցանկանում ենք տեղեկացնել, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հաճախորդ դառնալու ցանկության բացակայության դեպքում, Ապահովադիրները իրավունք ունեն լուծելու իրենց և «Լոնդոն-Երևան Կo» ապահովագրական ՍՊԸ-ի միջև կնքված ապահովագրության պայմանագրերը/վկայագրերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալով պայմանագրի չլրացած ժամկետի ապահովագրավճարները: Ապահովագրության պայմանագրերը/վկայագրերը լուծելու նպատակով, Ապահովադիրները պետք է անձնագրով, ապահովագրության պայմանագրի/վկայագրի իրենց օրինակներով, ներկայանան «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ, ք. Երևան, Հյուսիսային պող.1 կամ Տերյան 105/1 հասցեներով՝ ծանուցումը ստանալուց հետո 30 /երեսուն/ օրվա ընթացքում:

«Լոնդոն-Երևան Կo» ապահովագրական ՍՊԸ-ի հետ կնքված ապահովագրության պայմանագրերով/վկայագրերով պարտքերի առկայության դեպքում, խնդրում ենք Ապահովադիրներին դրանք փոխանցել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի 1570003731650100 կամ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի 21700 004-062402-001 հաշվարկային հաշիվներին՝ փոխանցելիս անպայման նշելով ապահովագրության պայմանագրի/վկայագրի համարը:
Մանրամասն տեղեկությունների համար, խնդրում ենք զանգահարել (010) 591019 կամ (010) 542557 հեռախոսահամարներով:

Մեր աշխատանքային ժամերն են՝ երկուշաբթիից-ուրբաթ՝ 9:00-ից մինչև 17:00-ն, շաբաթ օրը՝ 10:00-ից մինչև 15:00:

ՀՀ, 0001, ք. ԵՐԵՎԱՆ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՊՈՂ. 1
ՀԵՌ.՝ (+374 10) 59 10 10, 50 07 70
ԷԼ. ՓՈՍՏ՝ INFO@RGS.AM

РА, 0001, г. ЕРЕВАН, СЕВЕРНЫЙ ПР. 1
ТЕЛ.: (+374 10) 59 10 10, 50 07 70
E-MAIL: INFO@RGS.AM

1 NORTHERN AVE, YEREVAN, 0001, RA
TEL.: (+374 10) 59 10 10, 50 07 70
E-MAIL: INFO@RGS.AM